« Քայլ առ քայլ » բարեգործական հիմնադրամ

« Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման » ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում.

Դաստիարակ՝ Վարդուհի Աթանյան

Մանկապարտեզ՝ « Ամալյա Կարապետյանի անվան թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն..... 3

2. Ընտանիք-մանկապարտեզ փոխհարաբերություն..... 5

3. Ծնողի ներգրավվածության նշանակությունը.....8

4. Օրվա դասի պլան.....11

5. Եզրակացություն.....12

6. Գրականության ցանկ.....14

1. Ներածություն

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում մանկապարտեզի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են:

Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են դաստիարակներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:
Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է տալ հետևյալ հարցի պատասխանը.
Ինչպե՞ս սերտացնել ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը, որ համատեղ աշխատանքը ունենա իր դրական արդյունքը, գտնել փոխգործակցության ուղիներ, եղանակներ և ձևեր:
Երեխաներին, ծնողներին և դաստիարակներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Ծնողները և դաստիարակները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:
Դաստիարակի և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է մանկապարտեզի նկատմամբ ծնողների վերաբերմունքով , ինչպես նաև այն հանգամանքով , թե վերջիններս , ըստ իրենց իմացական կարողությունների , հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Մանկապարտեզի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են: Միաժամանակ կան հիմնախնդիրներ. որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են մանակապարտեզում

սաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ:
Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են առաջացած խնդիրները, դրանց փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի դաստիարակի շփման ոճը: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս սաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է:
Այսպիսով դաստիարակները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ:
Մանկապարտեզը երեխային տալիս է գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

2.Ընտանիք-մանկապարտեզ փոխհարաբերությունը

Ընտանիքի և մանկապարտեզի ընդհանուր նպատակը

Ընտանիք – մանկապարտեզ փոխհարաբերության մեջ կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվություն է կրում մյուսի հանդեպ: Եթե մանկապարտեզն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են , ինչը սաների կրթության, դաստիարակման վճռորոշ գործոն է , ապա հաղթանակն ապահովված է:
Երեխայի զարգացման վրա ամենաշատը ներգործում է ընտանիքը: Մեծ մանակավարժ Ժան – Ժակ Ռուսոն նկատել է , որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը: Ահա ինչու է ընտանիքի դաստիարակությունն այդքան կարևոր: Իսկ դրա արդյունավետ կազմակերպմանը պետք է մասնակից լինի մանկապարտեզը: Ես հենվում եմ ընտանեկան դաստիարակության դրական փորձի վրա ՝ օգտագործելով այն կրթության գործընթացում:
Ըստ Մակարենկոյի՝ երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և առաջի հերթին ՝ ծնողները:
Փոխվել է դաստիարակ - սաներ – ծնող եռանկյունին: Այն մտայնությունը, թե մանկապարտեզը չպետք է աշխատի ծնողի հետ, որ դաստիարակությունը միայն ծնողի գործն է, թյուր կարծիք է: Շատ բան է փոխվել – գնացել , բայց մնացել են ծնողն ու երեխան իրենց հոգսերով, և դաստիարակն առավել կարիք ունի ծնողի հետ համագործակցության, որպեսզի ավելի արդյունավետ կազմակերպմակերպվի սաների հետ տարվող աշխատանքը: Սաների հաջողությունը մանակապարտեզի և ընտանիքի ընդհանուր նպատակն է :
Մանկապարտեզի դաստիարակի ընտանիքի հետ աշխատելու նպատակներն են՝ օգտագործել այն հնարավորությունները, որոնք ընտանիքում դրական ազդեցություն ունեն երեխայի վրա: Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:
Ներգրավել նրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ: Համադրել ծնողների իրազեկվածությունը դաստիարակության գործում:

Մեր ժամանակների կարևորագույն խնդիրը
Մեր ժամանակներում կարևորագույն խնդիրը ծնողների ներգրավումն է մանակապարտեզի գործունեության մեջ: Ծնողների ներգրավածությունը բարձրացնում է ծնողի և դաստիարակի համագործակցության որակը: Այս գործոնի կիրառումը մեզ օգնում է պարբերաբար սպառիչ պատասխաններ ստանալ երեխայի վարքի մասին:

Դաստիարակները մշտական և ամենօրյա կապ են հաստատում ընտանիքի հետ ։ Եթե ծնողները ներգրավված են սաների դաստիարակության գործընթացում , ապա աճում է մանկապարտեզի հեղինակությունը հասարակության մեջ և ավելի արդյունավետ են լուծում գտնում ցանկացած տեսակի խնդիրներ:
Ծնողների մասնակցությամբ կազմված մանկապարտեզի միջոցառումների ծրագրերն առավել հաջողված են: Ծնողների հետ աշխատանքը կազմակեպում ենք խմբային և անհատական ձևերով: Համագործակցության հասնելու համար նախ փորձում ենք ճանաչել երեխայի ընտանիքը: Առաջին հանդիպման ժամանակ ծնողներին խնդրում ենք լրացնել հարցաթերթիկ՝ հետևյալ բովանդակությամբ.՝
1. Ի±նչ է սիրում ուտել ձեր փոքրիկը
2. Ի±նչ չի սիրում ուտել ձեր փոքրիկը
3. Ե±րբ է քնում և ռ±ր ժամին է արթնանում ձեր երեխան
4. Ի±նչ է սիրում անել
5. Ի±նչով է հաճախ զբաղվում
6. Ի±նչն է առաջացնում նրա մոտ բարկություն
7. Ի±նչպես եք հանգստացնում նրան, երբ բարկացած է , կամ լաց է լինում
8. Ի±նչ սովորություններ ունի ձեր փոքրիկը:

Պարբերաբար թարմացվում են այդ տեղեկությունները:
Այս հանդիպումը շատ բան է պայմանավորում: Այդ պահին է դրվում գործարար և արդյունավետ համագործակցության անկյունաքարը: Աշխատում եմ չներկայացնել այն դժվարությունները, որոնք սպասվում են ծնողին ու երեխային: Խիստ կարևոր են ծնողների հետ ընկերական – գործնական հարաբերությունների ձևավորումը և նրանց վստահության նվաճումը:
Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը նպաստում է , որ ուսումնառությունը յուրաքանչյուր երեխայի համար վերածվի ստեղծագործական միջավայրի , ստեղծվի միասնական համագործակցություն՝ ծնող-երեխա-դաստիարակ: Մեր մանկապարտեզների մեծ մասում կիրառվում են ընտանիքի հետ համագործակցության ավանդական ձևերը՝ ծնողական ժողով, հեռախոսազանգ, այց ծնողին: Վերջերս դրանց ավելացել է նաև էլեկտրոնային հաղորդակցությունը: Ցանկացած ծնող դաստիարակում է իր երեխային այնպես, ինչպես ինքն է համարում ճիշտ իր ունակությունների, հնարավորությունների, զգացմունքների, համոզմունքների սահմաններում: Շատերը ձեռնպահ են մնում 《 անհարկի 》 միջամտությունից: Այս ամենը պահանջում է նպատակաուղղված աշխատանք ։
Մեր խնդիրն է ստեղծել ծնողական ամուր թիմ պատրաստ մասնակցելու մանկապարտեզի կյանքին: Ես փորձում եմ շարժել ծնողների հետաքրքրությունը և շահագրգռությունը ուսումնական գործընթացին մասնակցելու առումով: Երեխայի ծնողը դառնում է իմ գործընկերը, խորհրդատուն և համախոհը: Հաճախ եմ անցկացնում ժողովներ, որոնց նպատակն է ծնողներին տեղեկացնել մանկապարտեզում տեղի ունեցող անցուդարձին,խնդիրներին:
Մեր հանդիպումները դառնում եմ կարծիքների քննարկման և գործնական առաջարկությունների ներկայացման միջոցներ: Պարզ է, խոսակցության թեման երեխաներն են: Աշխատում եմ նրանց ներկայացնել առավելապես իրենց դրական հատկանիշներով: Խուսափում եմ կտրուկ բողոքներից և բացասական որակումներից:

Չափազանց կարևոր է ուսումնական գործունեության ու դաստիարակության գործընթացների ճիշտ հարաբերակցումը և զուգակցումը։
Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը երեխայի համար ապահովի՝
1. դրական հույզեր ու ապրումներ
2. յուրաքանչյուր օրը տոն դարձնի
Երեխային երջանիկ տեսնելու ակնկալիքով հարկավոր է մանկավարժահոգեբանական գիտելիքներ հաղորդել նաև ծնողներին՝ ապահովելով վերջիններիս մանկապարտեզի կյանքին առավել ակտիվ մասնակցությունը։

3. Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի երեխաների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի զարգացման գործընթացին մեծ ազդեցություն է գործում:

Հետազոտումների համաձայն, սաները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են զարգացման գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև մանկապարտեզի վրա: Զարգացման գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է մանկապարտեզի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար մանկապարտեզը և դաստիարակը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և մանակարտեզի հասարակության, ծնողների և սաների վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը:

Օգուտ սաներին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, երեխան ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

● Սանը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.

● Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն դաստիարակների հետ կամ հետաքրքրված չեն մանկապարտեզի առօրյա կյանքով, նրանց երեխաների զ մյուս երեխաների հաարգացումը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.

● Երբ ծնողները ներգրավված են մանկապարտեզի կյանքում, սաներն ավելի դրականորեն են տրամադրված մանկապարտեզի հանդեպ.

● Այն սաները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված մանկապարտեզի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

● մանկապարտեզի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես դաստիարակների , այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

● Տարբեր միջավայրից դուրս եկած սաները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և դաստիարակը միասնաբար ձգտում են ընտանիքում և մանկապարտեզում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես սաների ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար:
Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:
Երեխայի զարգացման գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը. Ավելի է հասկանում սեփական երեխային.

- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ երեխայի հանդեպ և ավելի շատ է գնահատում երեխայի ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և երեխայի կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները:
- Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի դաստիարակների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Օգուտ դաստիարակին

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Դաստիարակի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.
- Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և դաստիարակի միջև կապվածության որակը, ինչը օգնում է դաստիարակին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին:

Օգուտ մանկապարտեզին

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես մանկապարտեզի վրա ևս.

- մանկապարտեզը ծնողների կողմից ավելի աջակցում ունի. Աճում է մանկապարտեզի հեղինակությունը հասարակության մեջ.
- մանկապարտեզի ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.

● Այն մանկապարտեզում, որտեղ սաների հաճախումը շատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Մանկապարտեզի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ դաստիարակը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն:
Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայքէջեր, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Հաճախ մանկապարտեզներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:
Դաստիարակները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել մանկապարտեզում երեխայի առաջընթացի վրա:
Մանկապարտեզը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակույթային տարբերությունը: Երբ ծնողի և մանկապարտեզի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից մանկապարտեզի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է մանկապարտեզի նկատմամբ դրական կապվածություն:

Օրվա դասի պլան

Խոսքի զարգացում

Թեմա՝ Խաղալիքների խանութում

Տեսակը՝ Դիդակտիկ խաղ

Նպատակը՝ Սովորեցնել խոսքում կիրառել դիմելաձևեր (բարևել, շնորհակալություն հայտնել), ձևավորել շարժումներով, դիմախաղո ներկայացնելու կարողությունները:

Վերջնարդյունք՝Կսովորեն դիմելաձևը, կձևավորի շարժումները դիմախաղով առարկաները ներկայացնելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութերը՝ խաղալիքներ և այդ խաղալիքների նկարները

Մեթոդները՝պատմում, բացատրություն, զրույց, անհատական հարցում

Կարողունակությունները՝ Լեզվական և հաղորդակցական կարողունակություն

Ընթացքը՝ Երեխաները բաժանվում են երկու խմբի և համագործակցում են միմյանց հետ:Առաջին խումբը ներկայացնում են վաճառողներին , երկրորդը՝ գնորդներին: Գնորդները մոտենում են վաճառողներին, վաճառողները համագործակցում են նրանց հետ և վաճառում են: Խաղալիքները վաճառողը սկսում է շարժումներով, դիմախաղով ներկայացնել որևէ խաղալիք (կատու, շնիկ, տիկնիկ, գնդակ , արջուկ, զինվորիկ և այլ): Վաճառողներին օգնում է դաստիարակը գնորդներից գաղտնի ցուցադրելով այս կամ այն խաղալիքի նկարներ: Գնորդը, եթե գուշակում է թե ինչ է ցուցադրում վաճառողը, անվանում է այն, վերցնում է գուշակած խաղալիքը և շնորհակալություն հայտնում: Խաղը շարունակելու ենք այնքան ժամանակ մինչև բոլորը գնում են իրենց խաղալիքները: Վերջում տրանսպորտի տարբերի միջոցներով վերադառնում ենք խմբասենյակ (ըստ դաստիարակի հրահանգի՝ քայլում ենք սենյակով մեկ).հիմա սլանում ենք գնացքով,բռնում են իրար մեջքից և երկար շղթա կազմած , շարժվող գնացքի ձայներ արձակելով հասանք մանկապարտեզ, հրահանգը լսելուն պես նստում ենք աթոռակներին :

Երեխաների և զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.

ա/երեխան կարողանում է ճիշտ կատարել և զուգակցել հիմնական շարժողական գործողությունները.

բ/խաղում է շարժախաղեր՝ հիմնական շարժողական գործողություններով, մասնակցում է մարզախաղերի տարրերով փոխանցումավազքերին՝ դրսևորելով անհրաժեշտ շարժողական ակտիվություն,

գ/կատարում է կեցվածքի շեղման, հարթաթաթությունը կանխարգելող վարժություններ

դ/ կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝առանց առարկաների և առարկաներով, վերին և ստորին վերջույթների , ուսագոտու, իրանի և որովայնի համար.

Խթանում՝ Խաղալիքները բերել և ցուցադրել:

Իմաստի ընկալում՝ հարցերի միջոցով ամփոփել թեման

Կշռադատում՝ խաղալ գնորդ և վաճառող խաղը:

Եզրակացություն

Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ մանկապարտեզը պետք է աշխատակցի նրանց հետ, որպեսզի մանկապարտեզն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին: Հետազոտությունները ցույց են տվել , որ մանկապարտեզները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

● Հաճախության բարելավում;

● Բարձր առաջադեմ սան,

● Սաների լավ վարք;

● Ծնողների վստահության բարձրացում մանկապարտեզի նկատմամբ:

● Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:

● Համարվում են գործընկեր երեխաների զարգացման գործում:

● Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու մանկապարտեզի գործունեությանը:

● Մշտական շփում ունի մանկապարտեզի անձնակազմի հետ, որը տալիս է զգալի դրական արդյունք:

Մանկապարտեզը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը: Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը , որն իրականացնում է մանկապարտեզը , պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը:

Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն դաստիարակ կամ ուսուցիչ: Համոզմունքի ձևավորում, որ ընտանիքն արժեք է, այն պետք է կառուցել փոխադարձ հարգանքի և հոգատարության հիման վրա: Ծնողներին հասցնել այն գիտակցությանը, որ ամուր կապ ունենալու համար պետք է և՛ ընտանիքում, և՛ մանկապարտեզում լինեն փոխադարձ սեր, հարգանք, ջերմություն, համատեղ աշխատանք:

Հարափոփոխ մեր կյանքում հաստատուն է անհատի զարգացման մանկավարժական ճիշտ մոտեցման անհրաժեշտությունը և՛ դպրոցում , և՛ մանկապարտեզում , և՛ ընտանիքում: Այս եռամիասնության թեկուզև մեկ օղակի թերացմամբ չեն բացահայտվի երեխայի զարգացման հաջողություններն ու թերությունները: Տրված էր կարճ ժամանակահատված հետազոտական աշխատանք իրականացնելու համար: ՈՒստի և հնարավոր է որոշակի թերություններ կամ բացթողումներ: Եթե տրված լիներ ավելի լայն ժամանակահատված կկարողանայի առավել շատ փորձարարական դասեր իրականացնել, իսկ վերջնարդյունքը կլիներ առավել լիարժեք և գոհացուցիչ:Այնուամենայնիվ համարում եմ, որ այս սեղմ ժամանակահատվածում կարողացա իրականացնել իմ առջև դրված խնդիրը:

Գրականություն

1. Ա. Ա. Սեդրակյան, «Ընտանիքի հոգեբանություն»
2. Ա. Նալչաջյան, «Ընտանիքի հոգեբանություն»
3. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005թ.
4. «Մանկավարժական միտք» ամսագիր, 2014թ. (1-2)
5. «Մանկավարժություն» ամսագիր, 2009 (1-2)
6. Համացանց